ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

ՈՐՈՇՈՒՄ

«12» սեպտեմբերի 2019 թվականի N 19/11

ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 10-Ի ԹԻՎ 2/2 ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 9-րդ մասի 9-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերով, 34-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ հաշվեքննիչ պալատի 2019թ. հունիսի 28-ի թիվ 14/4 որոշումը՝ ՀՀ հաշվեքննիչ պալատը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. ՀՀ հաշվեքննիչ պալատի 2018թ. մայիսի 10-ի թիվ 2/2 որոշմամբ հաստատված Հաշվեքննիչ պալատի կանոնակարգի՝

   ա) 12-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

   «Նիստում քննարկման ենթակա հարցերը ներկայացվում են Հաշվեքննիչ պալատի անդամների կողմից: Նիստում քննարկման ենթակա Հաշվեքննիչ պալատի որոշման նախագծերը Հաշվեքննիչ պալատի Նախագահի սահմանած ժամկետներում և հանձնարարությամբ ներկայացվում են Իրավաբանական բաժին՝ Հաշվեքննիչ պալատի կանոնադրության 36[1]-րդ կետի 3-րդ կամ 5-րդ ենթակետերով սահմանված լիազորություններն իրականացնելու նպատակով: Օրակարգում հարցերը քննարկվում են Իրավաբանական բաժնի մասնագիտական եզրակացության առկայությամբ»:

բ) 13-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«Նիստի օրակարգում ընդգրկված հարցերի քննարկման համար անհրաժեշտ բոլոր նյութերը՝ նիստի անցկացումից առնվազն երկու աշխատանքային օր առաջ ուղարկվում է Հաշվեքննիչ պալատի անդամներին»:

գ) 25-րդ կետում՝

«Իրավաբանական վարչությանը» բառերը փոխարինել «Իրավաբանական բաժինը» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀՀ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ Լ. ՅՈԼՅԱՆ